



## ԱՌԻԴՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Մենք կատարել ենք «Կրիիկիա» ՈւՎԿ ՍՊԸ-ի 2010թ. Համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին, Ֆինանսական վիճակի մասին, Դրամական միջոցների հոսքերի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունների աուդիտ:


Ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Աուդիտն իրականացվել է գործող Աուդիտորական Ստանդարտներով: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք պլանավորենք և կատարենք աուդիտն այնպես, որպեսզի հասնենք բավարար աստիճանի համոզվածության, թե կան արդյոք էական անճշտություններ ֆինանսական հաշվետվություններում: Աուդիտն իր մեջ ընդգրկում է ընտրանքային կարգով իրականացված այն փաստաթղթերի հաշվեքննումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվությունների գումարները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների տեղեկատվության բացահայտումները: Աուդիտը նաև ներառում է հաշվապահական հաշվառման վարման սկզբունքների գնահատումը, ինչպես նաև ֆինանսական և հաշվապահական աշխատանքների պատասխանատուների հարցումը: Մենք վստահ ենք, որ մեր կողմից իրականացված աուդիտը բավարար հիմք է մեր կարծիքի ձևավորման համար:

*Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները ընկերության ֆինանսական վիճակի՝ առ 1-ը հունվարի 2011թ., տալիս են ճշմարիտ և իրական պատկերը և կազմված են Ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն:*

20 հունիսի 2011թ.

Որակավորված Աուդիտոր

  
Գ. Թովմասյան

Աուդիտ Սերվիս ՍՊԸ տնօրեն՝  
Որակավորված աուդիտոր  
